

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՀԱԿՈՐՅԱՆ ՀԱՅԿԱՐԱՄ ՀԱԿՈՔԻ

**ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ
ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(Ք.Ա. IV - Ք. Ծ. V ԴԴ.)**

**Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2020

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մովսիսյան Արտակ Երջանիկի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր
Եղիազարյան Արման Սամվելի

պատմական գիտությունների թեկնածու
Վարդումյան Գոհար Դերենիկի

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ԳԱԱ Հնագիտության
և ազգագրության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020 թ. հուլիսի 24-ին, ժամը 14⁰⁰-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020 թ. հունիսի 11-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ՝  Մուրադյան Հ.Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունը էական դեր է խաղացել մարդկային պատմության բոլոր ժամանակներում և պետական կազմավորումների ձևավորումից մինչև այսօր կարևոր տեղ է զբաղեցրել պետական կառավարման գործում: Նկատի ունենալով նույն խնդրի արդիականությունը նաև մերօրյա Հայոց պետականության պարագայում, ատենախոսության բուն ուսումնասիրության համար ընտրել ենք մի ժամանակահատված, որի բոլորն պատմական իրադարձությունների բովում ձևավորվել է մեզ հասած հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունների հիմնական սկզբունքային համակարգը:

Աշխատանքում ուսումնասիրվում է այդ փոխհարաբերությունների ճիշտ գործադրությամբ՝ ազգային ինքնության գիտակցության բարձրացման և դիմագծի պահպանության խնդիրը՝ ազգի այն հատվածների համար, որոնք գտնվում են օտար պետական իշխանության ներքո: Իսկ ներկայումս, առավել քան երբևէ, ավելի շատ հայեր են իրենց կենսագործունեությունը ծավալում սեփական երկրի սահմաններից դուրս: Թեմայի ուսումնասիրությունը կարևոր է գլոբալիզացիոն գործընթացներում, նորագույն ձեռքբերումներից օգտվելով հանդերձ, կրոնական, մշակութային, գաղափարական հեղեղում սեփական ժառանգությունը պահպանելու և զարգացնելու համար: Ինչպես նաև, ազգային միասնականության ամրապնդման, պետականամետ արժեհամակարգի խթանման և դրա առարկայական դրսևորումների համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Թեմայի ուսումնասիրության նպատակն է լուսաբանել Մեծ Հայքի հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերակցությունը իր բազմաշերտությամբ: Ատենախոսության հիմնական խնդիրներն են՝

- Վեր հանել հայ իրականության մեջ հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերության ծագումն ու զարգացումը վաղնջական ժամանակներում: Պարզել, թե ինչպես է ներկայացվում ուսումնասիրվող խնդիրը հայ ավանդական պատմագրության մեջ՝ արտահայտված ազգածին նահապետների մասին ասքերում:
- Հինարևելյան գրավոր աղբյուրների ուսումնասիրությամբ պարզել, թե Ք.ա. III-II հազարամյակներում Հայաստանում ինչ փուլում էին գտնվում հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունները:
- Պարզաբանել Վանի (Արարատ-Ուրարտու) թագավորության ժամանակահատվածում նշված փոխհարաբերությունների զարգացումը, ցույց տալ դրա ազդեցությունը հետագա հայկական թագավորությունների վրա:
- Ուսումնասիրել նշված փոխհարաբերությունները Աքեմենյան տերությունում և հելլենիստական պետություններում: Ներկայացնել հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունների ոլորտում Աքեմենյաններից և հելլենիստական պետություններից Հայաստանի կրած ազդեցությունները:
- Պարզաբանել հայ հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերություններում բնիկ և ներմուծված տարրերը:

- Դիտարկել Աստվածաշունչը (Հին Կտակարանը և Նոր Կտակարանը) որպես հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերության ծագման և զարգացման մոդել: Վեր հանել դրա ազդեցությունը հայ իրականության վրա:
- Ցույց տալ, թե ինչպես է Հայաստանում կատարվել հոգևոր իշխանության իրավասությունների և ժառանգության փոխանցումը քրմական դասից եկեղեցական դասին:
- Վերլուծել 301-428 թթ. նոր հոգևոր դասի և աշխարհիկ իշխանության փոխհարաբերությունների ձևավորումը և ամրապնդումը Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունում:
- Հնարավորության սահմաններում ներկայացնել այդ շրջանում տվյալ փոխհարաբերությունների այն դրվագների փորձը, որը օգտակար է նաև մերօրյա պետականության համար:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ: Ատենախոսության բուն ուսումնասիրության շրջանակը կազմում է Ք.ա. IV – Ք. ծ. V դարերի ժամանակահատվածը: Սակայն, այդ ժամանակահատվածի հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերության պատմական հիմքի և ազդեցությունների լուսաբանման համար ուսումնասիրության է ենթարկվել նաև Ք.ա. III հազարամյակից մինչև Երվանդունյաց թագավորության սկզբնավորման ընկած ժամանակաշրջանը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ: Հայ գիտական շրջանակներում թեմային առնչվող մինչ այժմ կատարված շատ ուսումնասիրություններ հիմնականում կենտրոնացված են եղել միայն մի ժամանակաշրջանի կամ հիմնահարցի մի կողմի վրա: Ատենախոսությունում փորձ է կատարվել տարբեր գիտաճյուղերի փաստական նյութի վերլուծության հիման վրա կատարել հիմնահարցի ամբողջական, համակարգային ուսումնասիրություն:

Լուսաբանվել են հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերության ծագման, Ք.ա. III հազարամյակից սկսած հայ իրականությունում դրա գոյավիճակի և տարբեր ժամանակաշրջանների ընթացքում զարգացման հարցերը: Հիմնահարցի ուսումնասիրությունը հատկապես բաց էր Երվանդունյաց, Արտաշեսյան և Արշակունյաց թագավորության հեթանոսական ժամանակաշրջաններում, որը լրացվել է ատենախոսությունում: Ուսումնասիրվել են տարբեր ժամանակաշրջաններում հոգևոր և աշխարհիկ իշխանությունների արտաքին ազդեցությունները, և այն, ինչը հատուկ էր հենց հայ իրականությանը: Աստվածաշնչագիտության կիրառմամբ լուսաբանվել են հիմնահարցի սկզբնավորման և գաղափարական հենքի վերաբերյալ շատ հարցեր: Քննության է առնվել հեթանոսությունից քրիստոնեության անցումը և եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների սկզբունքային հիմնական համակարգի ձևավորումը:

ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Ատենախոսության գրության հիմքում հիմնականում ընկած են հետևյալ մեթոդները՝

- Ծագումնաբանական մեթոդ՝ խնդրի սկզբնավորումը պարզաբանելու համար:
- Պատմական մեթոդ՝ խնդրի էվոլյուցիան ներկայացնելու համար:

- Պատմաքննադատական մեթոդ՝ խնդրի վերաբերյալ դրվագների վավերականությունը ստուգելու և տվյալ ժամանակշրջանի պատմական նկարագիրը վերհանելու համար:
- Ավանդության ուսումնասիրության պատմական մեթոդ՝ որոշակի ենթատեքստային տարրեր լուսաբանելու և հայեցակարգային համակարգեր սահմանելու համար:
- Համեմատական մեթոդ՝ օգտագործվել է ժամանակային և տարածքային ինտերվալի կտրվածքով:
- Հետազոտությունը գրեթե առաջնորդվել ենք դեդուկտիվ մեթոդով: Ուսումնասիրության ժամանակագրական յուրաքանչյուր շրջանին համապատասխան, Հայաստանի հետ սերտ առնչության ունեցած, առավել ևս ազդեցություն գործած շրջակա երկրների միևնույն խնդրին անդրադարձ կատարելով՝ անցում ենք կատարել մասնավոր հայ իրականությունում տվյալ հարցի քննությանը:
- Հերմենևտիկ¹ մեթոդ՝ ուսումնասիրության ենթակա ժամանակաշրջանից մեզ հասած գրավոր վկայությունները իրենց համատեքստում հասկանալու և դրանց միջոցով անձի կրոնական, հասարակական կյանքի և աշխարհայացքի ընդհանուր պատկերը վերականգնելու համար:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը տեսական առումով կարող է օգտակար լինել նախաքրիստոնեական շրջանի հայ կրոնագիտության ուսումնասիրության համար: Ի տարբերություն այդ ոլորտի այլ աշխատությունների, ատենախոսությունում առավելապես քննության են առնվում ոչ թե տվյալ շրջանի պաշտվող աստվածները, այլ հոգևոր դասի իրավունքներն ու կացությունը:

Եկեղեցի և պետություն փոխհարաբերությունների մշակման ոլորտում ատենախոսությունը կարող է օգտակար լինել որպես պատմական փորձի ուսումնասիրություն: Աշխատանքում ուսումնասիրված ժամանակահատվածում ձևավորվել են եկեղեցու ու պետության փոխհարաբերությունների հիմնական դրույթները: Աշխատանքը կարող է օգտակար լինել տվյալ փոխհարաբերությունների վերաբերյալ հայեցակարգային մշակումների համար:

Աշխատանքը կարող է օգտագործվել կրթական համակարգում հայոց նախաքրիստոնեական հավատքի և «Հայ եկեղեցու պատմության» դասընթացների IV-V դարերին առնչվող թեմաների դասավանդման համար:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը քննարկվել և դրական երաշխավորությամբ հրապարակային պաշտպանության է երաշխավորել ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի կողմից:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը հրապարակվել է հեղինակի 6 աշխատանքներում:

ԱՐՔՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՆՔԸ: Թեմայի ժամանակագրական մեծ ընդգրկունությունը, արծարծվող շատ հարցերը և միմյանց հետ առնչվող, բայց այնուամենայնիվ տարբեր միջավայրերի, թագավորությունների, պետական

¹ Հայերեն գիտական հրատարակություններում հերմենևտիկայի հետ մեկտեղ օգտագործվում է նաև մեկնարկվեստ եզրույթը: Աշխատանքում մեթոդի կիրառության համար ավելի նպատակահարմար ենք համարել առաջին տարբերակը:

համակարգերի ուսումնասիրությունը թելադրել է աշխատանքում բազմատեսակ աղբյուրների և գրականության օգտագործումը:

Թեմայի ուսումնասիրության համար առանցքային նշանակություն են ունեցել հայ մատենագիրների գործերը: Մասնավորապես, կարևոր է եղել Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունը²: Այն ներկայացնում է հսկայական ժամանակահատված և հանդիսանում է հայոց ազգածին նահապետների մասին հիմնական սկզբնաղբյուրը: Դրանում կա հայ իրականությունում թագավորական նախնիների աստվածացման, հոգևոր և աշխարհիկ իշխանությունների առանձնացման և միևնույն տոհմում կենտրոնացման անդրադարձը: Հելլենիստական ժամանակաշրջանի հայ հոգևոր իշխանության վերաբերյալ կան տեղեկություններ, որոնք հատուկ են հենց հայ ժողովրդին:

Հեթանոսական շրջանի համաժողովրդական սովորույթների, պաշտամունքի, սրբավայրերի, կրոնում արքայի ներգրավվածության ու դերի մասին չափազանց կարևոր տեղեկություններ կան Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունում»³ և «Տարոնի պատմության»⁴ Զենոբ Գլակի կողմից գրված հատվածում: Մատենագրական այդ գործերը առաջնային նշանակություն ունեն հատկապես հեթանոսությունից քրիստոնեության անցումը ներկայացնելու առումով:

Մեծ Հայքում քրիստոնեության հռչակումից հետո մինչև 387 թ. բաժանումն ընկած ժամանակահատվածի վերաբերյալ չափազանց կարևոր տեղեկություններ են հաղորդվում Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն»⁵ աշխատությունում: Թեմայի համար հատկապես կարևոր է քրիստոնեության Մեծ Հայքի պետական համակարգ մուտք գործելուց հետո ներկայացվող եկեղեցի-պետություն հարաբերությունների ձևավորումը: Փավստոս Բուզանդի մոտ ավելի մանրամասնորեն են ներկայացված այդ փոխհարաբերությունների ամենալարված դրվագները:

Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների ձևավորման այդ կարևոր շրջանի վերաբերյալ նոր տեղեկություններ է հաղորդում Մեսրոպ Վայոցձորեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորչի տոհմի մասին և սուրբ Ներսես Հայոց հայրապետի պատմությունը»⁶ աշխատությունը: Այս աշխատությունը ավելի շատ կենտրոնանում է հոգևոր իշխանության գործունեության վրա:

V դարի սկզբին հայ ժողովրդի, որպես այդպիսին շարունակականությանը սպասվող վտանգներին դիմագրավելու համար հոգևոր իշխանության կողմից իրականացվող և աշխարհիկ իշխանության կողմից օժանդակվող լուսավորական աշխատանքների մասին է հաղորդում Կորյունի «Վարք Մաշտոցի»⁷ աշխատությունը:

²Տե՛ս **Մովսես Խորենացի**, *Պատմություն Հայոց*, (քննական բնագիրը և ներածությունը **Մ. Աբեղեանի** և **Ս. Յարությանի**), Երևան, 1991:

³Տե՛ս **Ագաթանգեղոս**, *Պատմություն հայոց*, (Քննական բնագիրը **Գ. Տեր-Մկրտչյանի** և **Ս. Կանայանցի**), Երևան, 1983:

⁴Տե՛ս **Հովհան Մամիկոնյան**, *Տարոնի պատմություն*, (թարգմ. և ներածութ. **Վ. Վարդանյանի**), Երևան, 1989:

⁵Տե՛ս **Փավստոս Բուզանդ**, *Պատմություն Հայոց*, (բնագիրը՝ **Ք. Պատկանյանի**) Երևան, 1987:

⁶Տե՛ս **Մեսրոպ Վայոցձորեցի**, *Յաղագս զարմից սրբոյն Գրիգորի Հայոց Լուսավորչի եւ պատմութիւն սրբոյն Ներսիսի Հայոց հայրապետի*, Վանաձոր, 2015:

⁷Տե՛ս **Կորյուն**, *Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի*, (Աշխատությանը՝ **Ա. Մաթևոսյանի**), Երևան, 1994:

Թեմայի ուսումնասիրությանը որոշ չափով օժանդակել են նաև ավելի ուշ ժամանակագրական շրջաններ ներկայացնող հայ մատենագիրներից Ղազար Փարպեցու «Հայոց պատմություն»⁸, Եղիշեի «Վարդանի և հայոց պատերազմի մասին»⁹, Ստեփանոս Օրբելյանի «Սյունյաց նահանգի պատմություն»¹⁰ և այլ աշխատություններ:

Աշխատանքի համար մեծ նշանակություն են ունեցել անտիկ պատմագիրների գործերը¹¹: Դրանց հեղինակները լինելով հեթանոսներ և ժամանակակիցը կամ ժամանակայնորեն մոտ քննարկվող պատմական իրադարձություններին, ավելի մանրամասնորեն ու առանց փոփոխությունների են հաղորդել հեթանոսական կյանքի մասին տեղեկությունները: Արժեքավոր են հատկապես հելլենիստական երկրներում թագավորական նախնիների պաշտամունքի և դրա զարգացման արդյունքում՝ գահակալող արքայի պաշտամունքի վերածման մասին տեղեկությունները: Կարևոր են նաև Մեծ Հայքի հարևան պետություններում քրմական դասի իրավասությունների, Արտաշեսյան շրջանի Հայոց արքայի իշխանության բացարձակության և Արշակունյաց թագավորության վաղ շրջանին վերաբերող տվյալները:

Հոգևոր և աշխարհիկ փոխհարաբերությունների վաղ շրջանի ուսումնասիրության համար օգտագործվել են շումերական, աքքադական, խեթական, ասուրական, ուրարտական սեպագիր արձանագրությունները¹²: Երկրների միջև քաղաքական հարաբերությունների, տնտեսական կապերի, գաղտնի հետախուզությունների, արքայական հրամանագրերի, տարած հաղթանակների, կատարված գործերի և այլ առիթներով թողնված արձանագրությունների միջոցով հաղորդվում են հայ իրականությունում մեզ հետաքրքրող խնդրի վերաբերյալ անուղղակի տվյալներ: Դրանցում տեղեկություններ են պահպանված պետական կազմավորման ղեկավարի իշխանական դիրքի, պետական կառույցի ու բնույթի, պաշտվող աստվածների,

⁸Տե՛ս **Ղազար Փարպեցի**, *Պարմոթին հայոց եւ թուրթ առ Վահան Մակիկոնեան*, Թիֆլիս, 1907:

⁹Տե՛ս **Եղիշե**, *Վասն Վարդանայ եւ Հայոց պարտերազմին*, Երևան, 1989:

¹⁰Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, *Պարմոթին նահանգին Սիսական*, (ծանոթագրութ. **Կ. վրդ. Շահնազարյանի**), Փարիզ, 1859:

¹¹Տե՛ս **Dio Cassius**, *Roman History*, Volume VIII, Books 61-70, (translated by **E. Cary**, edited by **E. Capps**), London, 1925, **Strabo**, *The Geography of Strabo*, Volume V (translated by **H. L. Jones**), London, 1961, **Appian**, *Roman History*, vol. II, (Edeted by **T. Page**, translated by **H. White**) London, 1962, **Հովսեփոս Փլավիոս**, *Հրեական հնախոսություն*, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 9, Հին հունական աղբյուրներ, Ա. (թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները **Ս. Մ. Կրկյաշարանի**), Երևան, 1976, **Tacitus**, *The Annals. The Reigns of Tiberius, Claudius and Nero*, (translated by **J. C. Yardley**), Oxford, 2008.

¹²Տե՛ս **Խաչատրյան Ա.**, *Հայաստանի սեպագրական շրջանի քննական պարմություն*, Երևան, 1933, **Ղափանցյան Գ.**, *Ուրարտուի պարմությունը*, Երևան, 1940, **Дьяконов И. М.**, *Урартские письма и документы*, Москва, 1963, **Հարությունյան Վ.**, *Կարմիր-բլուրի ուրարտական նոր արձանագրությունները*, ՊԲՀ, 1967, թ 2-3, էջ 324-328, **Իզումենով Վ. Ա.**, **Կարապյոզյան, Հ. Հ.**, **Հմայակյան Ս. Գ.**, *Օձասարի սեպագիր արձանագրությունը*, ՊԲՀ, 1997, թ. 1, էջ 193-202, **Մովսիսյան Ա.**, *Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը*, Երևան, 2003, **Մովսիսյան Ա.**, *Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (Ըստ գրավոր աղբյուրների)*, Երևան, 2005, *Հայ ժողովրդի պարմության քրեատմարիա. Հնագույն ժամանակներից մինչև Բ. հ. 298 թվականը (Հովհաննիսյան Պ., Մովսիսյան Ա.)*, հատոր 1, Երևան, 2007, **Ղազարյան Ռ.**, *Հայաստ. Քաղաքական և մշակութային պարմությունը*, Երևան, 2009:

ընդհանուր հասարակական կյանքի, գաղափարաբանության, ծիսակատարությունների, քրմական դասի և կրոնական համակարգի վերաբերյալ:

Աշխատանքը գրելիս մեծապես օգտվել ենք Աստվածաշունչ մատյանից¹³: Հին Կտակարանը իր 48 գրքերով օգտակար է եղել հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերության ծագման, ձևավորման, բաժանման և զարգացման ամբողջական մոդելը կազմելու համար: Նոր Կտակարանը իր 27 գրքերով օգտակար է եղել հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերության մասին քրիստոնեական մոտեցումների վերաբերյալ սկզբունքների համակարգը վեր հանելու համար:

Երվանդունյաց, Արտաշեսյան և Արշակունյաց թագավորությունների հեթանոսական շրջանի ուսումնասիրության համար կարևոր արժեք ունեն հայտնաբերված Աքեմենյան Պարսկաստանի, հունարեն և արամեերեն արձանագրությունները¹⁴: Արձանագրությունները կատարվել են հենց պատմական իրադարձությունների ժամանակ և առանց այլ մշակույթի ներկայացուցչի միջնորդավորման, ներկայացնում են իրենց ժամանակի կրոնական պատկերացումների դերը հասարակական կյանքում:

Ատենախոսության համար արժեքավոր նյութեր ենք քաղել հնագիտությունից¹⁵: Հելլենիստական ժամանակաշրջանի ուսումնասիրության համար կարևոր

¹³Տե՛ս *Աստվածաշունչ մատյան Հին եւ Նոր Կտակարանաց*, (աշխատասիրությամբ **Հ. Յ. Զօհրապեանի**), Վենետիկ, 1805:

¹⁴Տե՛ս **Տեր-Հակոբյան Ս.**, *Արմավիրի երկրորդ նորագույն արձանագրությունը*, Նյութեր Հին Հայաստանի պատմության մասին, ՀԽՍՀ Կուլտուրայի պատմության ինստիտուտի աշխատություններ, հ. I, Երևան, 1935, **Тер-Аветисян С.**, *Археологическое обследование города и крепости «Древний Армавир»*, Գիտական ժողովածու Արմֆանի, նվիրված Հայաստանում սովետական իշխանության հաստատման 20-ամյակին, Երևան, 1941, **Մանանդյան Հ. Հ.**, *Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ*, Երևան, 1946, **Մանանդյան Հ.**, *Գառնիի հունարեն արձանագրությունը և գառնիի հեթանոսական փառարկայի կառուցման ժամանակը*, Երևան, 1946, **Աբրահամյան Ա.**, *Գառնիի հունարեն արձանագրությունը*, Էջմիածին ամսագիր, 1947, թ. 9, էջ 61-73, **Тревер К.**, *Очерки по истории культуры древней Армении (II в. до н. э. - IV в. н. э.)*, Москва, 1953, **Տիրացյան Գ.**, *Արտաշես Ա-ի արամեափառ նորագույն արձանագրությունը*, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, 1957, թ. 10, էջ 105-109, **Периханян А. Г.**, *Арамейская надпись из Зангезура. Некоторые вопросы среднеиранской диалектологии*, ՊԲՀ, 1965, թ. 4, էջ 107-128, **Կրկյաշարյան Ս. Մ.**, *Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ*, Երևան, 1970, **Կարախանյան Գ.**, *Արամեերեն նորահայտ երկու արձանագրություններ*, ՊԲՀ, 1971, թ. 3, էջ 274-277, **Մարտիրոսյան Ա. Ա.**, *Հայաստանը և առաջին Սասանյանները*, ՊԲՀ, 1975, թ. 3, էջ 149-172, **Տիրացյան Գ.**, *Արտաշես Ա-ի ևս մեկ նորագույն արամեական արձանագրություն*, ՊԲՀ, 1977, թ. 4, էջ 254-259, **Հմայակյան Ս.**, **Կարապետյան Ի.**, *Արտաշեսյան սահմանաքարերի նոր գյույքեր Սևանի ավազանից*, Մաշտոցյան Գ ընթերցումներ, Զեկուցումների հիմնադրույթներ, Օշական, 2001, **Մովսիսյան Ա.**, *Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը*:

¹⁵Տե՛ս **Оганесян К. Л.**, *Арин-берд. Архитектура Эребуни. По материалам раскопок 1950-1959 гг.*, АН АрмССР, Археологические раскопки в Армении, н. 9., Ереван, 1961, **Առաքելյան Բ. Ն.**, *Հին Արտաշատ*, Երևան, 1975, **Խաչատրյան Ժ.**, *Հայաստանի Մկրտիկ շրջանի մեղալիքները* (մ. թ. ա. II - մ. թ. I դդ.), Հ ՍՍՀ ԳԱ, ԼՀԳ, 1978, թ. 5, էջ 46-55, **Խաչատրյան Ժ.**, *Արտաշատի VII բլրի 1973-1975 թթ. պեղումների արդյունքները*, ԼՀԳ, 1978, թ. 8, էջ 55-72, **Դեցյան Ս.**, *Թագավոր իշխանավորի պարկերը Լոռի բերդի բրոնզեդարյան բնակավայրից*, ԼՀԳ, 1986, թ. 8, էջ 75-81, **Хачатрян Ж.**, **Неверов О.**, *Архивы столицы древней Армении-Арташата*, Ереван, 2008, **Միքայելյան Լ.**, *Երվանդաշատի միջնադարյան հուշարձաններն ըստ պարմական աղբյուրների և հնագիտական նորագույն ուսումնասիրությունների*, ԵՊՀ Պատմություն և մշակույթ հայագիտ.

տեղեկություններ ենք առանձնացրել դրամագիտության միջոցով¹⁶: Այն մեզ փոխանցում է տվյալ ժամանակաշրջանի արքաների և պաշտվող ու հովանավոր աստվածների պատկերները: Դրամների վրա կարելի է գտնել խորհրդանշաններ և մակագրություններ, որոնք օգնում են գահակալի նվաճումների, քաղաքականության, նրան տրված տիտղոսների և կրոնական համակարգում ունեցած դերի դիտարկմանը:

Մեր առջև դրված հարցերի ուսումնասիրության նպատակով օգտվել ենք մեծ թվով ուսումնասիրություններից: Ք.ա. III հազարամյակի հայաստանյան պետական կազմավորումների ուսումնասիրության համար մեծապես օգտվել ենք Ա. Մովսիսյանի «Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (Ըստ գրավոր աղբյուրների)»¹⁷ աշխատությունից: Սեպագրական արձանագրությունների հիման վրա ներկայացվում են փաստեր, թե Հայկական լեռնաշխարհում, այդ ժամանակաշրջանում, ինչ փուլում էին գտնվում հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունները: Հայասայի թագավորության (Ք.ա. XV-XIII դդ.) կրոնական պաշտամունքի հարցի վերաբերյալ կարևոր ուսումնասիրություն է Ռ. Ղազարյանը իր «Հայասա. Քաղաքական և մշակութային պատմությունը»¹⁸ աշխատությունը:

Ատենախոսությունը շարադրելիս մեծապես օգտվել ենք Հին Աշխարհի կրոններին (այդ թվում՝ հայոց հին հավատքին) նվիրված ուսումնասիրություններից¹⁹: Այն հաղորդում է հոգևոր իշխանության կառուցվածքի պետական համակարգում ներգրավվածության և գաղափարախոսության ձևավորման մասին: Ցույց է տալիս արքայի դերը ժողովրդի համար և նրա տեղը կրոնական կյանքում: Կրոնագիտական ուսումնասիրությունները

հանդես, 2013, էջ 243-253, **Mairs R.**, *The Hellenistic Far East. Archaeology, Language and Identity in Greek Central Asia*, California, 2014.

¹⁶Տե՛ս **Humphreys H. N.**, *The Coin Collector's Manual, or Guide to the Numismatic student in the formation of a Cabinet of Coins*, London, Volume I, 1853, **Պողոկեան Զ.**, *Արտաշեսյան հարստության դրամները*, Վիեննա, 1969, **Մուշեղյան Խ. Ա.**, *Դրամական շրջանառությունը Հայաստանում (մ.թ. ա - V դ. - մ. թ. XIV դ.)*, Երևան, 1983, **Gardner P.**, *The Coins of the Greek and Scythic Kings of Bactria and India*, London, 1886, **Պողոկեան Զ.**, *Տիգրան Մեծի պղնձեայ դրամներու դրամագիտ. մը և Արտաշեսյան հարստության դրամագիտ. մը*, Լոս Անճելես, 1991, **Մուշեղյան Խ.**, *Հայոց պատմության դրամագիտականը*, Երևան, 1997, **Thonemann P.**, *The Hellenistic World. Using Coins as Sources*, Cambridge, 2016.

¹⁷Տե՛ս **Մովսիսյան Ա.**, *Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (Ըստ գրավոր աղբյուրների)*:

¹⁸Տե՛ս **Ղազարյան Ռ.**, *Հայասա. Քաղաքական և մշակութային պատմությունը*:

¹⁹Տե՛ս **Կոստանեանց Կ.**, *Հայոց հեթանոսական կրօնը*, Վաղարշապատ, 1879, **Գելգեր Հ.**, *Հերազոպոթին հայ դիցաբանության, Վենետիկ, 1897, Կարիերի Ա., *Հեթանոս Հայաստանի ուղևորականներն*. Ազգաբանագիտ. եւ Մ. Խորենացույ համեմատ, (թարգմ. **Տաշեան Հ. Յ.**), Վիեննա, 1899, **Carter G. W.**, *Zoroastrianism and Judaism*, California, 1918, **Price S. R.**, *Rituals and Power. The Roman Imperial Cult in Asia Minor*, New York, 1998, **Mikalson J. D.**, *Religion in Hellenistic Athens*, California, 1998, **Bottero J.**, **Herrenschmidt C.**, *Ancestor of the West. Writing, Reasoning and Religion in Mesopotamia, Elam and Greece*, Chicago, 2000, **Nigosian S. A.**, *The Zoroastrian Faith. Tradition and Modern Research*, Montreal, 1993, **Heyman G.**, *The Power of Sacrifice. Roman and Christian Discourses in Conflict*, Washington, 2007, **Mikalson J. D.**, *Ancient Greek Religion*, Oxford, 2010, **Հարությունյան Ս.**, *Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքը ու դիցաբանը*, Երևան, 2011, **Rupke J.**, *A Companion to Roman Religion*, Oxford, 2011, **Բարսեղյան Պ.**, *Վաղ Հավատալիքներն ու դիցաբանությունը Հայաստանում*, Երևան, 2015, **Edinow E.**, **Kindt J.**, *The Oxford Handbook of Ancient Greek Religion*, Oxford, 2015.*

օժանդակում են կրոնի քաղաքական նշանակությունը լուսաբանելու համար: Մասնավորապես, դրա գործադրումը այլ երկրներ հնազանդության մեջ պահելու, համադաշնություն կազմելու և գրավված տարածքները մեկ միասնական համակարգի վերածելու գործոնները դիտարկելու համար: Ուրարտուի կրոնական համակարգի ուսումնասիրության համար մեծ արժեք է ներկայացնում Ս. Հմայակյանի «Վանի թագավորության պետական կրոնը»²⁰ հիմնարար աշխատությունը: Թեմայի վերաբերյալ հարուստ փաստական նյութ է ներկայացվում Ե. Գրեկյանի «Բիայնիլի-Ուրարտու. Պետություն և հասարակություն»²¹ ատենախոսության մեջ:

Երվանդունյաց թագավորական շրջանի Մեծ Հայքի պետական կառուցվածքի, կառավարման համակարգի, քրմապետի և արքայի գործառույթների, վերջինիս կրոնում զբաղեցրած դերի քննության վերաբերյալ կարևոր ուսումնասիրություններ է կատարել Ս. Կրկյաշարյանը²²:

Արտաշեսյան ժամանակաշրջանի համար Մեծ Հայքի պետական կառույցի, հելլենիստական երկրներից կրած ազդեցությունների, արքայական պատվատիտղոսների, իշխանության լեգիտիմացման, պաշտամունքային սինկրետիզմի գահակալի և պաշտվող աստծու նույնականացման և այլ հարցերի վերաբերյալ հիմնավոր ուսումնասիրություններ է կատարել ակադեմիկոս Գ. Սարգսյանը²³: Հեթանոսական տաճարային համակարգի և Մեծ Հայքի հարևան երկրների հոգևոր իշխանության վերաբերյալ շատ հարցեր լուսաբանված են Ա. Փերիխանյանի «Փոքր Ասիայի և Հայաստանի տաճարային միությունները»²⁴ աշխատությունում:

Արտաշեսյան և Արշակունյաց ժամանակաշրջանի պատմական իրադարձությունների ու թագավորական իշխանության գաղափարական և իրավաբանական հենքի խորը վերլուծություն է կատարել Ռ. Մանասերյանն իր «Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ» աշխատությունում և այդ թեմայի հետագա զարգացմանն ուղղված ուսումնասիրության արդյունքում²⁵:

²⁰Տե՛ս **Հմայակյան Ս. Գ.**, *Վանի թագավորության պետական կրոնը*, Երևան, 1990:

²¹Տե՛ս **Գրեկյան Գ. Ե.**, *Բիայնիլի-Ուրարտու. Պետություն և հասարակություն (պալմասինազիպական հետազոտություն)*, ատենախոսություն, Երևան, 2016:

²²Տե՛ս **Կրկյաշարյան Ս. Մ.**, *Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Կրկյաշարյան Ս. Մ.*, *Հայոց արքայի տիրոջ աշարի մասին*, ԼՀԳ, 1982, թ. 9, էջ 45-51, **Կրկյաշարյան Ս. Մ.**, *Պետական ապարադի կազմավորումը և նրա հետագա զարգացման փուլը Հին Հայաստանում*, ՊԲՀ, 1994, թ. 1-2, էջ 225-238, **Կրկյաշարյան Ս. Մ.**, *Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա. VI - մ.թ. IV դդ.)*, Երևան, 2005:

²³Տե՛ս **Саркисян Г. Х.**, *Тиграканерт. Из истории древнеармянских городских общин*, Москва, 1960, **Սարգսյան Գ. Խ.**, *Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին*, Երևան, 1966, **Սարգսյան Գ. Խ.**, *Հայաստանը հելլենիստական ժամանակաշրջանում*, Հայ ժողովրդի պատմություն, հ. I, բաժին Ե, Երևան, 1971, էջ 490-699:

²⁴Տե՛ս **Периханян А. Г.**, *Храмовые объединения Малой Азии и Армении. (IV в. до н. э. – III в. н. э.)*, Москва, 1959:

²⁵Տե՛ս **Մանասերյան Ռ.**, *Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ. Արտաշեսյան քաղաքականություն, պետական գաղափարաբանության պրոբլեմներ և քրիստոնեության ընդունում*, Երևան, 1997, **Մանասերյան Ռ. Լ.**, *Հին Հայաստանի քաղաքական և գաղափարաբանական զարգացման հիմնահարցերը. Թագավորական իշխանություն, միջազգային հարաբերություններ, պետական գաղափարաբանություն (մ.թ.ա. 1-ին դ. - մ.թ. 4-րդ դ.)*, ատենախոսություն, Երևան, 1998, **Մանասերյան Ռ. Լ.**, *Թագավորական իշխանության հասարակության զարգացման*

Թեմային առնչվող տարբեր ժամանակահատվածների վերաբերյալ մեծ ուսումնասիրություններ է կատարել Լեոն: Աշխատանքի համար հատկապես արժեքավոր է եղել նրա «Երկերի» I հատորը²⁶, որտեղ Բ.հ. I դարի վերաբերյալ հայտնվում են այնպիսի մանրամասներ, որոնց սկզբնաղբյուրը կորած լինելով՝ դրանք կարելի է գտնել միայն իր աշխատանքներում:

Արշակունյաց թագավորության շրջանի պետական ապարատի ուսումնասիրության համար մեծ արժեք ունեն Ն. Ադոնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում»²⁷, Հ. Մանանդյանի «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում»²⁸ և «Հայ ժողովրդի պատմության» ակադեմյական I-II հատորներում հրատարակված Ս. Երեմյանի ուսումնասիրությունները²⁹:

Աստվածաշնչյան ուսումնասիրությունները³⁰ կարևոր էին մեր աշխատանքի համար, որովհետև դրանք օգնում էին տեքստերի իմաստի, ավանդույթների և Հին Արևելյան ու հռոմեապատակ երկրների համատեքստի ճիշտ ընկալման համար:

Քրիստոնեության պետական կրոն հռչակման և դրա քաղաքական նպատակադրումների մասին կարևոր ուսումնասիրություն է կատարել Վ. Թորոպյանը³¹:

առանձնահատկությունները Արքաշեսյանների օրոք (թագավորը և ավագանին), ԼՀԳ, 1999, թ. 1, էջ 77-85:

²⁶Տե՛ս Լեոն, *Երկերի ժողովածու*, հատոր Ա, Երևան, 1966:

²⁷Տե՛ս Ադոնց Ն., *Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում*. Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Երևան, 1987:

²⁸Տե՛ս Մանանդյան Հ., *Ֆեոդալիզմը Հին Հայաստանում* (Արշակունիների ու մարզպանական շրջան), Երևան, 1934:

²⁹Տե՛ս Երեմյան Ս. Տ., *Մեծ Հայքի թագավորության պետական կառուցվածքը մ.թ. I-II դարերում*, Հայ ժողովրդի պատմություն, հատոր I, Երևան, 1971, էջ 823-843, Երեմյան Ս. Տ., *Հայաստանը ֆեոդալական հարաբերությունների ծնավորման ժամանակաշրջանում* (III-IV դդ.), Հայ ժողովրդի պատմություն, հատոր II, Երևան, 1984, էջ 21-161:

³⁰Տե՛ս Edersheim A., *Bible History. Old Testament*, Volume I, California, 1890, Եղիայեան Բ., *Քննական պատմություն Սուրբգրական ժամանակներու*, Գիրք Ա., Լիբանան, 1972, Kang S. M., *Divine War in the Old Testament and in the Ancient Near East*, New York, 1989, Reventlow H., Hoffman Y., *Politics and Theopolitics in the Bible and Postbiblical Literature*, Sheffield, 1994, Fox E., *The five Books of Moses*, London, 1995, Pagolu A., *The Religion of the Patriarchs*, Sheffield, 1998, Barton J., *The Biblical World*, Volume II, New York, 2002, Barenboim P., *Biblical Roots of Separation of Powers*, Moscow, 2005, Thompson D. M., *Why the Bible is Historically Accurate*, St. Louis, 2006, Walton J. H., *Ancient Near Eastern Thought and the Old Testament. Introducing the Conceptual World of the Hebrew Bible*, Michigan, 2006, Merrill E. H., *Kingdom of Priests. A History of Old Testament Israel*, Michigan, 2008, Hill A. E., Walton J. H., *A Survey of the Old Testament*, Michigan, 2009, Grudem W., *Politics According to the Bible, A Comprehensive Resource for Understanding Modern Political Issues in Light of Scripture*, Michigan, 2010, Stevens M. E., *Leadership Roles of the Old Testament. King, Prophet, Priest*, Sage, Eugene, 2012, Puett T. L., *Biblical Chronology*, St. Louis, 2012, Matthews V. H., Moyer J. C., *The Old Testament. Text and Context*, Michigan, 2012, Schwartz M. B., Kaplan K. J., *Politics in the Hebrew Bible. God, Man and Government*, Maryland, 2013, Holmes S., *The Beginning of Politics. Power in the Biblical Book of Samuel*, Princeton, 2017, Ֆունդաս Ե., *Հին Կրակարանի բովանդակությունը և աստվածաբանությունը*, Էջմիածին, 2018:

³¹Տե՛ս Թորոպյան Վ., *Քրիստոնեության ընդունումը Հայաստանում և Տրդատ Գ-ի գործունեությունը*, Հայոց պատմություն, հատոր II, գիրք առաջին, Երևան, 2018, էջ 15-32:

Հայաստանում եկեղեցու և պետության IV-V դարերի պատմության մասին ուշագրավ են Բ. Հարությունյանի ուսումնասիրությունները³²:

Հայ եկեղեցու և պետության փոխհարաբերությունների զարգացումը ուսումնասիրելիս օգտվել ենք Վ. Վարդանյանի «Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչմերուկներում» աշխատությունից³³: Հեղինակը հանգամանորեն ներկայացնում է Հայ եկեղեցու իրականացրած ջանքերը՝ հասարակական հարաբերությունների և բարքերի համապետական փոփոխությունների իրականացման համար: Հայ եկեղեցու գործունեության պայմանների փոփոխությունները դիտարկվում են նաև Արևելահռոմեական և Սասանյան տերությունների հետ Մեծ Հայքի քաղաքական հարաբերությունների պրիզմայով:

301-428 թթ. հետազոտման համար օգտագործել ենք նաև Եկեղեցու պատմության վերաբերյալ ուսումնասիրություններ: Հատկապես օգտակար են եղել Մաղաքիա արք. Օրմանյանի «Ազգապատում»³⁴, Կ. Տեր-Մկրտչյանի «Հայ եկեղեցու պատմություն»³⁵ և Ե. արք. Պետրոսյանի «Հայ եկեղեցու պատմություն (Սկզբից մինչև 1441 թ.)»³⁶ աշխատությունները:

Ի դարից մինչև 301 թ. քրիստոնեության զարգացումը և պետական կրոն դառնալուն պատրաստ գոյավիճակը լուսաբանելու համար օգտակար են եղել Ի. Մեյենդորֆի «Ներածություն հայրախոսական աստվածաբանության»³⁷, Վ. Բոլոտովի «Եկեղեցու պատմութիւնը տիեզերական ժողովների շրջանում»³⁸ աշխատությունները և որոշ այլ գործեր³⁹: Այդ աշխատությունները կիրառվել են նաև Հռոմեական կայսրությունում քրիստոնեական եկեղեցին համայնքային և պետական մակարդակներում վերածելու և հայ իրականության հետ համեմատական քննություն անցկացնելու համար:

Թեմայի վերաբերյալ տարբեր գիտաճյուղերում, տարբեր ժամանակաշրջանների և խնդիրների ուղղվածությամբ առկա են հարուստ նյութեր, և կարիք է զգացվում այդ

³²Տե՛ս **Հարությունյան Բ.**, *Հայ եկեղեցու թեմական բաժանումը Գրիգոր Լուսավորչի հովվապետության շրջանում*, ՊԲՀ, 2000, թ. 2, էջ 108-127, **Հարությունյան Բ.**, *Հայոց արքունիքի դերը Հայոց եկեղեցու անկախացման գործում*, Հայոց եկեղեցի և պետություն միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2000, էջ 28-48, **Հարությունյան Բ.**, *Պապի ներքին քաղաքականությունը*, Հայոց պատմություն, հատոր II, գիրք առաջին, Երևան, 2018, էջ 131-137:

³³Տե՛ս **Վարդանյան Վ. Մ.**, *Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչմերուկներում*, Վաղարշապատ, 2005:

³⁴Տե՛ս **Օրմանեան Մ.**, *Ազգապատում*, հատոր Ա, Էջմիածին, 2001:

³⁵Տե՛ս **Տեր-Մկրտչյան Կ.**, *Հայոց եկեղեցու պատմություն*, Մասն Ա, Էջմիածին, 2011:

³⁶Տե՛ս **Պետրոսյան Ե. Ծ. վրդ.**, *Հայ եկեղեցու պատմություն (Սկզբից մինչև 1441 թ.)*, Մաս Ա, Էջմիածին, 1995:

³⁷Տե՛ս **Մեյենդորֆ ֆ. Ի.**, *Ներածություն հայրախոսական աստվածաբանության*, Էջմիածին, 2013:

³⁸Տե՛ս **Բոլոտով Վ. Վ.**, *Եկեղեցու պատմութիւնը տիեզերական ժողովների շրջանում*, Վաղարշապատ, 1914:

³⁹Տե՛ս **Papandrea J. L.**, *Reading the Early Church Fathers. From the Didache to Nicaea*, New York, 2012, **Պետրոսյան Ե.**, *Հայրաբանություն*, մաս Ա, Էջմիածին, 1996, **Дворкин А.**, *Очерки по истории Вселенской Православной церкви*, Москва, 2008, **Wheatley A. B.**, *Patronage in Early Christianity. Its Use and Transformation from Jesus to Paul of Samosata*, Oregon, 2011, **McGrath A. E.**, *Christian History. An Introduction*, New Jersey, 2013.

ամենը ծառայեցնել հիմնահարցի ամբողջական, ընդհանուր և համակարգված ուսումնասիրությանը:

ԱՏԵՆԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսությունը շարադրված է 176 էջի սահմաններում: Այն բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորված են թեմայի արդիականությունը, ուսումնասիրության գիտական նորոյթը և կիրառական նշանակությունը: Նշված են հետազոտության նպատակն ու խնդիրները, ժամանակագրական շրջանակները, կիրառված մեթոդաբանությունը, աղբյուրագիտական հենքը և ուսումնասիրվածության աստիճանը:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽԸ վերնագրված է «Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունը մինչարտաշեսյան Հայաստանում» և բաղկացած է չորս ենթագլխից: **Առաջին ենթագլուխում՝ «Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերության պատկերացումը ազգածին նահապետների մասին ավանդադրույցներում»** հայոց հնագույն ավանդապատումներից դուրս են բերվում մեզ հետաքրքրող խնդրի վերաբերյալ պատմական իրողության տարրերը և ներկայացվում է նշված փոխհարաբերությունների պատկերը: Վեր հանված տեղեկություններից պարզ է դառնում, որ հայ իրականությունում վաղնջական ժամանակներից չի ընդունվել իշխանության գլուխ կանգնած ապրող կառավարչի պաշտամունքը:

Երկրորդ ենթագլխում՝ «Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունը Հայաստանի վաղ պետական կազմավորումներում (Ք.ա. III-II հազարամյակներ)» խնդրի հետ կապված մեզ հասած շումերական, քաղական, խեթական, ասորեստանյան և այլ գրավոր աղբյուրների հաղորդած տեղեկությունների հիման վրա վերլուծվում է Ք.ա. III-II հազարամյակների հայաստանյան պետական կազմավորումներում հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունը: Ցույց է տրվում, թե ինչ փոխում էին գտնվում տվյալ փոխհարաբերությունները: Ներկայացվում են տվյալ ժամանակաշրջանում տիրող թեոկրատական կարգերը, որի ժամանակ թե՛ հոգևոր, և թե՛ աշխարհիկ իշխանությունները կենտրոնանում էին մեկ անձի ձեռքում:

Երրորդ ենթագլխում՝ «Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունը Վանի (Քիայնիլի, Արարատ, Ուրարտու) թագավորությունում» ներկայացվում է այդ փոխհարաբերությունը ուրարտական առաջին արքաների օրոք և դրա զարգացումն ու փոփոխությունը արքայական դինաստիայի հետագա ներկայացուցիչների ժամանակ: Ցույց է տրվում որոշակի կապ պրոտոհնդեվրոպական (Dyeus pater)-ի և թագավորական վերնախավի աստված Խալդիի միջև ու դրանով պայմանավորված՝ արքայի հատուկ դերը կրոնական կյանքում: Ներկայացվում է հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունների դերը ուրարտական արքաների քաղաքականության վրա: Ուրարտուի վերջին գահակալների օրոք նշվում է այդ փոխհարաբերությունների նոր փուլը՝ արքայի և քրմապետի պաշտոնների բաժանումը և այդ բաժանման տիպերը:

Չորրորդ ենթագլխում՝ «Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունը Մեծ Հայքում Երվանդական դարաշրջանում (Ք.ա. VI-III դարեր)» անդրադարձ է կատարվում Երվանդական ժամանակաշրջանի երեք ենթաշրջաններին և հատուկ ուշադրություն է դարձվում դրանցից երրորդին: Շեշտվում է Վանի թագավորության և Աքեմենյան տերության թողած հետքը Երվանդունիների դարաշրջանի հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունների վրա: Ուսումնասիրվում են այդ հարաբերությունները պայմանավորող հոգևոր, մշակութային, գաղափարական, տնտեսական, ռազմական, քաղաքական և իրավական գործոնները: Կարևոր է մայրաքաղաքի և կրոնական կենտրոնի միմյանցից առանձնացման դրվագը և դրա պատճառների ու նշանակության քննությունը: Անդրադարձ է կատարվում թագավորական նախնիների պաշտամունքի, թեոկրատիայից աշխարհիկ պետության անցման գործընթացի, թագավորական գահակալման արարողակարգի, թագավորի և քրմապետի տոհմական պատկանելության ու Երվանդ Դ-ի գործունեության նպատակաուղղվածության հարցերին:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ կրում է «**Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունը Մեծ Հայքում Ք.ա. II-I դարերում**» խորագիրը և բաղկացած է երկու ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ «Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերության բնորոշ գծերը հելլենիստական երկրներում» ներկայացվում են տվյալ փոխհարաբերությունները հունական միջավայրում և արևելյան սովորույթների հետ դրանց սինթեզի արդյունքում ձևավորված հելլենիստական կարգերի առանձնահատկությունները: Քննության են առնվում թագավորական նախնիների և ապրող կառավարչի պաշտամունքի ձևավորման պատճառները, բնույթը և նշանակությունը: Խոսվում է հելլենիստական միապետների պատվատիտղոսների և դրանց դերի մասին: Հելլենիստական պետությունների շարքում հատուկ ուշադրություն է դարձվում Սելևկյան տերությանը, որը մյուսների համեմատ ամենից շատն է ազդել Մեծ Հայքի վրա: Ինչպես նաև Պտղոմեական և Բակտրիայի միապետություններին, որոնցից առաջինի մասին պահպանվել են խնդրին վերաբերվող, ընդհանուր հելլենիստական պետություններին բնորոշ օրինաչափությունների մասին հարուստ տեղեկություններ, իսկ երկրորդից ծագում էր Արշակունյաց դինաստիան: Քննվում են հոգևոր և աշխարհիկ իշխանությունների հարաբերությունները պայմանավորող գործոնները:

Երկրորդ ենթագլխում՝ «Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունը Մեծ Հայքի թագավորությունում» հելլենիստական ազդեցության լույսի ներքո քննվում է տվյալ խնդիրը Ք.ա. II-I դարերում: Տվյալ փոխհարաբերությունների շնորհիվ օգտագործելով արտաքին ազդեցությունները՝ զարգացվում է բուն հայ էթնոսին պատկանող ավանդույթները, ինչը իր հերթին ավելի ամրապնդում է Արտաշեսյան պետության ինքնուրույնությունը: Տույց է տրվում այդ հարաբերությունների ընդհանուր պատմական աստիճանական զարգացման օրինաչափություններից տարբերվող բնույթը: Ուսումնասիրվում են Արտաշես Ա-ի գահակալումից սկսված՝ ժամանակի ոգուն համապատասխան թագավորական իշխանության բացարձակեցման ջանքերը և դրա հետևանքները՝ վերոհիշյալ հարաբերություններում: Այդ գործընթացի բարձրակետ է դառնում ապրող արքայի

աստվածացումը: Ներկայացվում է դրա նշանակությունը պետական գաղափարաբանության տեսակետից, ինչպես նաև պատճառները ու դերը՝ կախված քաղաքական և ռազմական հզորության աստիճանից:

ԵՐՐՐՐԴ ԳԼԽՈՒՄ՝ «Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունը Մեծ Հայքում I-III դարերում» ներկայացվում են հետարտաշեսյան շրջանի զարգացումները, Հռոմեական կայսրության նկրտումները և նոր արքայատոհմի՝ Արշակունիների Մեծ Հայքի գահին հաստատման պայմաններում հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունների դրսևորումները: Քննվում է Վահունիների քրմապետական տոհմի՝ իրենց պաշտոնում վերհաստատումը և դրա պատճառները: Խոսվում է քրմական լիազորությունների, ներգրավվածության բնագավառների և Հայոց արքայի կրոնական դաշտում ունեցած դերի ու պարտականությունների մասին: Քննվում է Սասանյանների տիրապետության ժամանակ Մեծ Հայքում վարած կրոնական քաղաքականությունը: Որոշ չափով վերականգնվում է ժամանակաշրջանի հայ հեթանոսական հասարակության արարողակարգերի, գաղափարաբանության և աշխարհայացքի ընդհանուր պատկերը: Ներկայացվում է թագավորական իշխանության և քրմական դասի հարաբերությունների ծայրաստիճան լարումը՝ վերջիններիս պաշտոնավարման վերջին շրջանում:

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ կրում է «**Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունը 301-428 թթ.**» խորագիրը և բաղկացած է չորս ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ «Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերության Հինտակարանյան մոդելը» Հին Կտակարանի և Հին Մերձավոր Արևելքի արձանագրությունների զուգահեռ ուսումնասիրությամբ ներկայացվում են նշված փոխհարաբերության պատմական զարգացման որոշակի օրինաչափություններ: Պատկերացում է հաղորդում հնագույն շրջանից սկսած՝ հսկայական ժամանակահատվածի ընթացքում տվյալ իշխանությունների առաջացման, բաժանման, զարգացման և դրանց միջև գոյություն ունեցող կապի մասին: Ուշադրություն է դարձվում օրենսդիր և գործադիր մարմինների ձևավորմանը, իշխանությունների փոխադարձ բալանսավորման գործոնին, դատավարության, պատերազմի և ժողովրդի առաջ ծառացած կենսական նշանակության խնդիրների պարագայում՝ երկու ուժերի դերին ու փոխգործունեությանը: Ներկայացվում է բնիկ աշխարհիկ իշխանության վերացման պարագայում հոգևոր իշխանության գործառույթների ընդլայնումը և պետականության վերականգնմանն ուղղված գործունեությունը:

Երկրորդ ենթագլխում՝ «Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերության Նորկտակարանյան մոտեցումները» քննության են առնվում Նոր Կտակարանում առկա այն կոնցեպտուալ մոտեցումները, որոնք իր հետ պետք է բերեր Հայաստան քրիստոնեության պետական կրոն հռչակումը: Ըստ այդ մոտեցումների, իշխանության պահպանման համար չպետք է վնասվեն այլ անձինք, և պետք է բացառվի անձի պաշտամունքի և խտրականության ցանկացած դրսևորում: Օրենքները պետք է գործադրվեին մարդկային կյանքի բարօրության համար և ոչ թե հակառակը: Առանց իրար հակադրման պետք է իրականացվեն Աստծու և պետության առջև եղող պարտականությունները և չհարաշահվեն լիազորությունները: Վաղ քրիստոնեական

համայնքում ներկայացվում են գործնականապես կիրառվող սկզբունքներ, որոնք իրենցից դարեր առաջ համարվել են զուտ իդիալիստական գաղափարներ, իսկ իրենցից դարեր անց, շատ պետություններում վերածվել են համընդհանուր իրականության: Ուսումնասիրության արդյունքում Ավետարաններից, Գործք Առաքելոցից, Առաքելական թղթերից և Հայտնության գրքից վեր են հանվում այն կարևոր սկզբունքները, որոնց հիման վրա հետագա դարերում, քրիստոնեություն ընդունած երկրներում ձևավորվել են Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները:

Երրորդ ենթագլխում՝ «Պաշտոնական նոր կրոնի՝ քրիստոնեության մուտքը Մեծ Հայքի պետական կառավարման համակարգ» քննարկվում են Մեծ Հայքում Քրիստոնեության պետական կրոն հռչակման քաղաքական պատճառները, և նոր կրոնը հնի հիմնասյուների վրա կառուցելուն ուղղված քայլերը: Ներկայացվում են քրմական դասից եկեղեցականներին փոխանցվող իրավունքներն ու արտոնությունները, այդ թվում՝ տաճարական հողատիրոջներն ու հարստությունը, մեծ դատավարության պաշտոնը, ինչպես նաև կրթության և գիտության ոլորտներում առանձնաշնորհումները: Համառոտ ցույց է տրվում եկեղեցականների գործունեության շրջանակները արքայական պալատում և իշխանական տներում: Աստվածաշնչյան սկզբունքների հիման վրա եկեղեցական դասին էր տրվում կանոնական օրենսդրական լայն առանձնաշնորհում: Խոսվում է հայրապետին վերապահված՝ արքայի, ժողովրդի և իշխանների միջև միջնորդի դերի մասին:

Չորրորդ ենթագլխում՝ «Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունը Մեծ Հայքում 301-428 թթ.» ներկայացվում են ներքին և արտաքին քաղաքական իրավիճակով պայմանավորված այն խնդիրները, որոնք պետք է լուծվեին եկեղեցական դասի և արքայական իշխանության համագործակցության արդյունքում: Քննության են առնվում քրիստոնեության արմատավորմանն ուղղված կարևորագույն քայլերը: Դիտարկվում է Ներսես Ա-ի Մեծ Հայքի ժողովրդին մեկ մեծ, միասնական հոգևոր համայնքի վերածելու ծրագիրը՝ որպես Արշակ Բ արքայի Մեծ Հայքը կենտրոնական իշխանությամբ հզոր ու անկախ թագավորություն դարձնելու մեծ հեռանկարի կարևոր մի մասը: Ի հայտ են բերվում ծրագրի համար օրինակ հանդիսացած Հռոմեական կայսրության ներսում ձևավորված հոգևոր համայնքների և Հին Կտակարանյան օրենքի և կրոնի միջոցով ժողովրդի առջև ծառացած խնդիրների լուծման փորձը և դրա կիրառության եղանակը Մեծ Հայքում: Ցույց են տրվում ծրագրի ծախսողման պատճառները և ծրագիրը իրականացնելու ջանքերի թողած դրական մեծ ազդեցությունը հայ ժողովրդի կյանքում, ինչպես նաև նշանակությունը Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի գործունեության համար: Ներկայացնում է, թե ինչպիսի դրսևորումներ էին ունենում քրիստոնյա Հայաստանում հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունները մինչև Արշակունյաց թագավորության անկումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ բաժնում ի մի են բերված ատենախոսության հիմնական եզրահանգումներն ու արդյունքները:

- Ք.ա. III-II հազարամյակում Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումներում հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունները արդեն իսկ գտնվում էին զարգացման որոշակի աստիճանում: Գործում էր կառավարման

թեոկրատական համակարգ, որի պարագայում հոգևոր և աշխարհիկ իշխանությունները կենտրոնանում են մեկ անձի ձեռքում:

- Թե՛ սեպագրական տեղեկությունները, և թե՛ ավանդական պատմագրությունը փաստում են, որ Հայկական լեռնաշխարհում, չնայած Մերձավոր Արևելքի երկրների հետ սերտ առնչությանը, չէր ընդունվում ապրող կառավարող անձի պաշտամունքը: Իշխանության գլուխ անցած անձի պաշտամունքը արմատական փոփոխություններ էր առաջ բերում հոգևոր և աշխարհիկ փոխհարաբերություններում:

- Վանի թագավորության շրջանում ձևավորվում և հզորանում է առանձին հոգևոր ոլորտի գործառույթները իրականացնող դասակարգ, որի գլուխը դեռևս համարվում էր արքան: Կազմավորվում է քրմական դասի նվիրապետական աստիճանակարգը, որն ընդգրկում էր նաև տերության նորանվաճ վայրերը: Դրա միջոցով ոչ նյութական կերպով փորձ էր կատարվում նորանվաճ տարածքները դարձնել ընդհանրական համակարգի մի մասը:

- Տերության միասնականության ուժեղացման համար արքայի և քրմական դասի կողմից ակտիվորեն տարածվում էր նաև Խալդիի պաշտամունքը: Նրա հանդեպ հատուկ վերաբերմունքը, ինչպես նաև վերդիցարանային ու երկակի բնույթը կապված էր իշխող տոհմի վաղ ժամանակների ներկայացուցչի հետ, որը աստվածացվել էր և այդ անձի պաշտած աստծու՝ հին հնդեվրոպական Երկնքի հոր (Dyeus pater) հետ, որի պաշտամունքը սինկրետիզմի արդյունքում միացվել է արքայատոհմի նախնու հետ:

- Վանի թագավորության շրջանում գոյություն ուներ արքայական նախնիների պաշտամունք, որն օգտագործվում էր թագավորի սակրալ կերպարի ձևավորման համար: Այդ երևույթը թագավորության վերջին շրջանում վերաճում է մինչև իսկ ապրող թագավորի պաշտամունքի, որը կարճ ժամանակ է տևում: Այդ շրջանում նաև բաժանվում են արքայի և քրմապետի պաշտոնները:

- Երվանդունիների թագավորության օրոք հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունները զարգացան Վանի թագավորության թողած ժառանգության հիմքի վրա և Աքեմենյան տերության ազդեցությամբ:

- Քրմապետի և թագավորի պաշտոնները պատկանում էին միևնույն տոհմին, ինչը չափազանց սերտացնում էր երկու իշխանությունների փոխհարաբերությունները:

- Ք.ա. IV դարից սկսած՝ աշխարհաքաղաքական բեկումնային փոփոխություններից, որոնք հիմք հանդիսացան հելլենիստական ժամանակաշրջանի համար, անմասն չմնաց նաև Մեծ Հայքը: Այդ ժամանակաշրջանում մարդկանց աշխարհայացքը և կենսակերպը շատ մոտ էր կրոնին: Դրանով պայմանավորված՝ հոգևոր իշխանությունը կյանքի բազմազան ասպեկտներում սերտորեն առնչվում էր հասարակության բոլոր խավերի հետ: Այդ հանգամանքը աշխարհիկ իշխանության հեղինակության արմատացման համար ձեռք բերեց կենսական նշանակություն, որի արդյունքում ձևավորվեցին փոխհարաբերությունները երկու ուժերի միջև:

- Հելլենիզմի ժամանակաշրջանում այդ փոխհարաբերությունները պայմանավորվում էին աշխարհաքաղաքական դրությամբ, տերության էթնոկազմով, ռազմական ներուժով, պաշտվող կրոնով, ավանդույթներով և այլ գործոններով: Այդ շրջանում հատկապես ապրող արքայի պաշտամունքը և միապետական կարգերը մեծ փոփոխությունների պատճառ հանդիսացան: Եթե մինչ հելլենիզմը, քրմական դասը

գոհաբերությունների և արարողակարգերի միջոցով կապ էր հաստատում պաշտվող աստվածների և ժողովրդի միջև, ապա հեյլենիստական շրջանում քրմերը պետք է հանդիսանային նաև պաշտվող միապետերի և ժողովրդի փոխադարձ կապի հաստատողները:

- Կարևոր հարցերի շուրջ քննարկումներ էին տեղի ունենում այդ երկու իշխանությունների միջև: Քրմերի նշանակումները կատարվում էին թագավորի կողմից: Գոյություն ունեցող փոխհարաբերությունների արդյունքում կանխվում էին շատ ապստամբություններ, արքայի կամքը նույնականացվում էր պաշտվող աստվածների կամքի հետ, իսկ հոգևոր իշխանությունը ազատվում էր շատ հարկերից և պարգևներ ստանում պետական գանձարանից:

- Տերության շահերի համար հոգևոր իշխանությունը համագործակցելով աշխարհիկ իշխանության հետ՝ մասնակցում էր արտաքին քաղաքականությանը: Դրա արդյունքում սերտացվում էր հարաբերությունները այլ պետությունների հետ, իրավական հիմնավորում էր ստեղծվում տվյալ թագավորության և դինաստիայի գոյության ու կառավարման համար:

- Հեյլենիստական ազդեցությունը ամենից շատ զգացվել է Արտաշեսյան թագավորության շրջանում: Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունները բացի այդ կրում էին նաև Աքեմենյանների տիրապետության ժամանակից մնացած հետքեր, սակայն, այնուամենայնիվ, դրանք զարգանում էին Վանի թագավորությունից և Երվանդունիներից իրենց փոխանցված հայկական ավանդույթների հիմքի վրա: Թագավորական նախնիների պաշտամունքը ոչ թե հեյլենիստական ազդեցությամբ է սկսվել Արտաշեսյանների օրոք, ինչպես կարծում են որոշ մասնագետներ, այլ այն ունի ավելի խորը արմատներ և գոյություն է ունեցել դեռևս Վանի թագավորությունում ու Երվանդունիների ժամանակաշրջանում և այդ մակարդակի վրա զարգացել է նրանց հաջորդող մյուս դինաստիայի օրոք:

- Քրմապետի պաշտոնը սկսած Արտաշեսյաններից՝ շարունակվում էր տրվել արքայական ընտանիքի անդամներին, սակայն այդ շրջանում արդեն ի հայտ է գալիս արքայական ընտանիքից առանձին, զուտ քրմական տոհմ: Երվանդունիներից սերող Վահունիների քրմական դասը Արտաշեսյանների օրոք զրկվում է այդ պաշտոնից: Այդ քայլը կապված էր նախկին թագավորական տան վերականգնման վտանգը չեզոքացնելու և արդյունք՝ հայ ավանդական և օտարամուտ արժեքների բախման:

- Հեյլենիստական քաղաքական հիմունքների համաձայն կազմավորված Արտաշեսյան թագավորության շրջանում նկատվում էր արքայի դերի միանշանակ գերազանցությունը՝ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերություններում: Առկա էր կրոնական համակարգում արքայական սակրալ էության աստիճանական զարգացում: Այն սկզբում արտահայտվում էր թագավորական նախնիների պաշտամունքով, շարունակվում էր աստվածային ծագմամբ ու դրսևորումներով, գահակալների համբավի ստեղծմամբ և հանգուցակետին հասնում ապրող արքայի աստվածացմամբ:

- Արտաշեսյանների թագավորության վերջին շրջանում Մեծ Հայքի հոգևոր իշխանության կազմ էին մտցվել շատ օտարազգի քրմեր: Ք.հ. I դարի սկզբում հայկական իշխանական ուժերի բաժանումը պարսկամետների և հռոմեամետների ու Մեծ

Հայքի թագավորական գահին օտար արքայական դինաստիայի բազմումը նաև հոգևոր բնիկ իշխանության թուլության արդյունք էր:

- Հայոց գահին բազմած Արշակունիներն իրենց թագավորության սկզբում, հունահռոմեական տարրերի հետ մղման նպատակով վերականգնում են Արտաշեսյանների օրոք իշխանությունից զրկված Վահունիների քրմապետական տոհմի պաշտոնը: Վերջիններս էլ իրավական հիմնավորում են տալիս Արշակունիների թագավորական իշխանությանը և աշխատանքներ ծավալում ժողովրդին և ավագանուն նրանց երկրի «բնիկ տերեր» ընդունելու համար:

- Տրդատ Ա-ի քուրմ լինելու հանգամանքը չէր նշանակում, որ Մեծ Հայքում քրմապետական պաշտոնը նորից միանում էր արքայականին: Դա արդյունք էր հին հնդեվրոպական ավանդույթի, որի համաձայն Տրդատը լինելով պարթևական կրտսեր արքայազն մինչ Մեծ Հայքի գահ բարձրանալը, զբաղվում էր քրմական դասի առաջնորդությամբ:

- Նման փոխհարաբերությունների արդյունքում մեծապես աճում են հոգևոր իշխանության իրավասություններն ու կարողությունները և հասնում այնպիսի աստիճանի, որ նրանք, Տրդատ Գ-ի կողմից երկիրը քրիստոնեականացնելու պատճառով, կարողացան անգամ դեմ առ դեմ պատերազմ մղել թագավորական իշխանության դեմ:

- Գրիգոր Լուսավորիչը քրմերի սերունդին ընդունելով նոր կրոնի սպասավորության գործում, ամբողջացրեց Մեծ Հայքում քրիստոնեությունը հին կրոնի հիմնասյուների վրա հիմնելու և պետականացնելու գործընթացը: Այդ հիմնասյուներն էին՝ պաշտամունքի վայրերը, ծիսական արարողություններն ու տոները և քրմաց դասը:

- Մեծ Հայքի պետական կառավարման համակարգ քրիստոնեության մուտքով ուժեղացվեց թագավորական կենտրոնական իշխանությունը: Օժանդակելով քրիստոնեության տարածմանը նաև Վիրքում և Աղվանքում, ստեղծվեց հակասասանյան դաշնություն: Հայոց արքային գահ բարձրանալիս օծում էր հայրապետը, որով նա դառնում էր Աստծո կողմից տրված սրբազան իշխանության կրողը և ստանձնում Աստծո կամքի առաջին իրագործողի դերը երկրում:

- Քրմապետից կաթողիկոսին փոխանցվեց մեծ դատավորի պաշտոնը, և դրան հավելվեցին օրենսդրական լայն իրավագործություններ: Նախկին աշխարհաժողովների փոխարեն գումարվող շատ ազգային-եկեղեցական ժողովներում ծանրակշիռ դարձավ եկեղեցական դասի ձայնը: Հայ եկեղեցին ստանձնեց երկրում նոր քրիստոնեական մշակույթի, կրթության և գիտության զարգացման գործը: Կարևոր լծակ էր նաև պետական հիերարխիայում սահմանակարգություններ կատարելու իրավունքը: Կարևոր էր նաև ժողովրդի, իշխանական դասի և թագավորի միջև միջնորդի դերը, ինչպես նաև ներգրավումը երկրի արտաքին հարաբերություններում:

- Աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերության ծագման և զարգացման, ինչպես նաև 301 թ. Մեծ Հայքում հաստատված հոգևոր նոր իշխանության գաղափարական հենքի տեսակետից առաջնային նշանակություն ունի այդ հարաբերությունների Հինկտակարանյան մոդելը և տվյալ փոխհարաբերությունների վերաբերյալ Նորկտակարանյան մոտեցումները: Ծննդոց գրքում ցույց է տրվում այդ իշխանությունների վաղագույն շրջանի միացյալ, մեկ անձի մեջ կենտրոնացած լինելը: Հնգամատյանի մյուս գրքերում տեսնում ենք արդեն այդ իշխանությունների բաժանման

սկիզբը: Դատավորաց գիրքը ներկայացնում է այդ գործընթացի միջին շրջանը, երբ արդեն սկսված էր բաժանումը, սակայն իշխանությունները առանձնաբար դեռ ամբողջությամբ չէին ձևավորվել: Թագավորաց գրքերը մեզ ներկայացնում են ամբողջապես ձևավորված հոգևոր և աշխարհիկ իշխանություններ, որոնք ժողովրդի բարօրության համար բալանսավորում են միմյանց:

- Հոգևոր դասը ժողովրդին կրոնի միջոցով համախմբելով և համընդհանուր կանոններ հաստատելով՝ մասնակիցն էր դառնում պատմական բարդ իրադրությունում հայտնված ժողովրդի առջև ծառացած խնդիրների լուծման գործին: Ի տարբերություն Մերձավորարևելյան շատ երկրների, Հինկտակարանյան մոդելում թագավորները զուրկ էին օրենսդիր իշխանությունից:

- Օտարի լծի տակ գտնվելու պարագայում հոգևոր դասի շրջանակներում, ազգի սպասելիքները բյուրեղացվում էին ազատագրիչի գաղափարով: Հոգևոր դասը ազգային իշխանության բացակայության պարագայում, օտար տիրակալության կրոնափոխության պարտադրանքի ժամանակ, օգտագործում է իր միջոցները դրան հակադդելու համար և մեծ դերակատարում ցուցաբերում ապստամբության կազմակերպման գործում: Հին Կտակարանը ցույց է տալիս մի օրինակափություն, ըստ որի, եթե արտաքին թշնամական ձեռնարկումները միտված չեն ազգի վերացմանը, ապա պետության կործանումից հետո գեթ հոգևոր իշխանության պահպանումով հնարավոր է դառնում դիմակայել ասիմիլյացիային: Այդ դեպքում օտար տիրակալների հետ անբարենպաստ դիրքերից ձևավորվող հարաբերությունների պարտականությունը ծանրանում է հոգևոր իշխանության վրա, որն էլ մեծ ջանքերի, բարենպաստ հանգամանքների դեպքում կարող է վերստեղծել իր ազգային աշխարհիկ իշխանությունը:

- Ըստ հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերության Նորկտակարանյան մոտեցումների՝ պետությունը որոշում է այն համակարգը, որում ապրում է հասարակությունը, հեռու պահում այն քաոսից, ապահովվում է խաղաղություն, անվտանգություն, կարգ ու կանոն, իսկ հոգևոր դասը գործում է հավատացյալ անձի և համայնքի դժվարըմբռնելի և փոփոխական իրականության հասկացության համար: Դա ընգրկում է մարդու դերը, նպատակը այս աշխարհում, հարաբերությունը իր նմանի և իշխանությունների հետ, գաղափարը, թե որտեղից է այն գալիս, ինչ է այն և ինչպես է այն օգտագործվում, հնազանդությունը, պարտականությունները, բարոյականությունը՝ ճշմարիտի և սխալի ընտրությունը և կյանքի էական հավատքային հիմնավոր այլ գործոններ:

- Նշմարվում է ապագա քրիստոնեական երկրների հիերարխիկ կառուցվածքը: Նոր Կտակարանի համաձայն, աշխարհիկ իշխանությունը չպետք է իր դիրքի պահպանման համար վնասի այլոց, չպետք է դիտարկի իրեն տրվածը՝ որպես արտոնություն, այլ ընդունի այն որպես ծառայություն, չպետք է չարաշահի իր գործառույթները, չպետք է միտվի անձնապաշտության, իսկ հոգևոր իշխանությունը հասարակության մեջ պետք է արթուն պահի մի մեծ ընտանիքի պատկանելիության և Աստծու ու պետության առջև սրբազան պարտքի զգացողությունը: Նման հարաբերությունների պարագայում կարող է գործել հավասարությունը և արդարությունը:

- 301-428 թթ. հանդիսացավ եկեղեցու և պետության հարաբերությունների ձևավորման շրջան և հետագայում այդ հարաբերությունները զարգացան տվյալ ժամանակահատվածում կազմված սկզբունքների հիման վրա:

- IV-V դարերի Մեծ Հայքում եկեղեցու և պետության հարաբերությունները ոչ թե հանդիսանում էին իշխանության համար երկկողմանի մղվող պայքար, այլ դրանք սեփական առաքելության իրականացման ջանքեր էին: Հիմնականում Մեծ Հայքում արքունիքը ջանքեր էր գործադրում պետության պահպանության և հնարավորության դեպքում՝ հզորացման համար, իսկ եկեղեցին՝ քրիստոնեական կրոնի ու բարքերի անաղարտության համար: Իհարկե, երկու կողմերի առաքելությունների իրականացման մեթոդները կարող էին հակասություն առաջացնել փոխհարաբերություններում, սակայն ավելի խորքային նշանակություն ունեցող Հայ եկեղեցու և պետության նպատակը ոչ միայն չէր հակասում միմյանց, այլև փոխլրացնում էր իրար:

- 301-428 թթ. հոգևոր իշխանության առանցքային խնդիրը հանդիսացել է ամբողջ երկրում քրիստոնեության տարածումը և ամրապնդումը, ինչին հնարավորության պարագայում մեծապես օժանդակել է աշխարհիկ իշխանությունը: Հայ ժողովրդին քրիստոնյա դարձնելու ընթացքը կարելի է բաժանել չորս հիմնական մասերի՝ առաքելական շրջանի քարոզչություն, Տրդատ Մեծի և Գրիգոր Լուսավորչի կողմից քրիստոնեությունը պետական կրոնի հռչակում, Ներսես Մեծի կողմից հայ ժողովրդի լայն զանգվածներում քրիստոնեության արմատավորում և Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի միջոցով քրիստոնեական կրոնի հայացում:

- Արշակունյաց թագավորության անկումով վերջ դրվեց հայ իրականությունում հոգևոր և աշխարհիկ իշխանության ղեկավարների միևնույն տոհմին պատկանելու սկզբունքին: Այդ ամենը այլևս չկրկնվեց ո՛չ Բագրատունյաց թագավորությունում, և ո՛չ էլ Կիլիկյան Հայոց թագավորությունում:

- Քրիստոնեության պետական կրոն հռչակումից հետո, մոտ 128 տարի տևած աշխարհիկ իշխանության հետ փոխհարաբերությունների ընթացքում տարված հսկայական ջանքերի շնորհիվ եկեղեցին Մեծ Հայքում ներկայացնում էր ոչ թե զուտ հոգևոր դաս, այլև մի ողջ ժողովուրդ: Այդ ընթացքում ստեղծեցին այնպիսի հավատքային, գաղափարական, մշակութային հիմքեր, որոնց շնորհիվ հայ ժողովուրդը կարողացավ դիմագրավել հետագայում հարուցված մարտահրավերներին:

- Արշակունյաց թագավորության անկումից հետո, Սահակ Պարթևի ջանքերով պահպանվեց հայ իշխանների գահերը այնպես, ինչպես սահմանված էր թագավորության ժամանակ, իսկ Հայ եկեղեցին իր ուսերի վրա կրեց ավելի մեծ պարտականություններ:

**Ատենախոսության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի
հետևյալ հոդվածներում**

1. Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերության Նոր Կտակարանյան մոտեցումները, «Էջմիածին» հանդես, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2019, № 5, էջ 130-139:
2. Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունը Հայաստանում Երվանդական դարաշրջանում (Ք.ա. IV-III դարեր), «Լրատու» հանդես, Երևան, 2019, № 2, էջ 43-52:
3. Մեծ Հայքի ժողովրդին մեկ հոգևոր համայնքի վերածելու Ներսես Մեծի ծրագիրը, «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես, Երևան, 2019, № 4, էջ 48-60:
4. Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունը Վանի (Արարատ-Ուրարտու) թագավորությունում, «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես, Երևան, 2020, № 1, էջ 28-42:
5. Պետական կառավարումն ըստ հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերության Հին Կտակարանյան մոդելի, «Այլընտրանք» գիտական հանդես, Երևան, 2020, № 1, էջ 380-393:
6. Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունը Մեծ Հայքի թագավորությունում Արտաշեսյան դինաստիայի օրոք, «Դպրատուն» հանդես, Ստեփանակերտ, 2020, № 1, էջ 106-118:

Акопян Айкарам Акопович
Отношение между духовными и светскими властями в Царстве Великой
Армении (IV век до н.э.- V век н.э.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности
07.00.01 “История Армении”

Защита состоится 24-го июля 2020 г., в 14⁰⁰ на заседании специализированного
совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории
НАН РА (0019, Ереван, пр. М. Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Диссертация посвящена изучению взаимоотношения духовной и светской властей в Великой Армении с ее многоуровневой природой, возникновению, развитию и выявлению общей картины данной проблемы. На основе анализа фактического материала различных научных отраслей проводится комплексное систематическое изучение проблемы. Учтены мировые (древневосточные, эллинистические и раннехристианские) события этого периода и особенности их влияния на армянскую действительность.

Диссертация состоит из введения, четырех глав, заключения, списка использованных источников и литературы.

Во введении обосновывается актуальность темы, научная новизна исследования и его практическая значимость. Упоминаются цель и задачи исследования, хронологический охват, используемая методология, основа источниковедения и уровень исследования.

В первой главе «Взаимоотношение между духовными и светскими властями в Армении до Арташесидов» элементы исторической реальности по интересующему нас вопросу взяты из древних армянских преданий, и представлена картина упомянутых взаимоотношений. Анализируется взаимоотношение между духовными и светскими властями в государственных образованиях Армении в III-II тысячелетиях до н.э. Это взаимоотношение представлено во времена первых урартских царей, и его развитие и изменение во время дальнейших представителей царской династии. Показывается определенная связь между протоиндоевропейской (Dyeuspater) и богом королевской элиты Халди, и, исходя из этого, особая роль короля в религиозной жизни. Делается ссылка на три подпериода Ервандидской эпохи, и особое внимание уделяется третьему из них. Подчеркивается влияние Королевства Ван и Империи Ахеменидов, и духовные, культурные, идеологические, экономические, военные, политические, правовые факторы, обуславливающие эти отношения.

Во второй главе «Взаимоотношение между духовными и светскими властями в Великой Армении в II-I веках до н.э.» данные взаимоотношения представлены в греческой среде, и особенности эллинистического порядка, сложившегося в результате их синтеза с восточными обычаями. Рассмотрены причины, характер и значение формирования культа царских предков и живого правителя. Обсуждаются почётные звания эллинистических монархов и их роль. В свете эллинистического влияния этот вопрос рассматривается в Царстве Великой Армении в II-I веках до н.э. Показывается характер этих отношений отличающегося от закономерностей общеисторического постепенного развития. Изучаются усилия по абсолютизированию королевского правительства в соответствии с духом времени, начиная с правления Арташеса I, и его последствия в вышеупомянутых отношениях. Обожествление живого царя становится кульминацией этого процесса. Представлено его значение с точки зрения государственной идеологии и его роль, в зависимости от уровня политической и военной мощи.

В третьей главе «Взаимоотношение между духовными и светскими властями в Великой Армении в I-III веках» представлены события в постарташеский период, стремления Римской империи и проявления взаимоотношений между духовными и светскими властями в условиях установления на престол Великой Армении новой династии Аршакуни. Изучаются восстановление священнической династии Вахуни в их должности и ее причины. Говорится о духовных полномочиях, сферах вовлечённости, роли и обязанностях армянского царя в религиозной сфере. Изучается религиозная политика, проводимая в Великой Армении во времена правления Сасанидов. В определенной степени восстанавливается общая картина обрядов, идеологии и мировоззрения армянского языческого общества того периода. Представлена крайняя напряженность отношений между королевским правительством и священническим классом, в течение последнего периода их пребывания в должности.

В четвертой главе «Взаимоотношение между духовными и светскими властями в 301–428 годах» представлены определенные закономерности исторического развития упомянутых взаимоотношений через модель Ветхого Завета. Рассматриваются концептуальные подходы в Новом Завете, которые должны были повлечь за собой провозглашение христианство государственной религией в Армении. Анализируются политические причины провозглашения христианства государственной религией в Великой Армении и вступление новой религии в государственную систему. Изучаются самые важные шаги по укоренению христианства. Рассматривается план Нерсеса I превратить народ Великой Армении в одно большое объединённое духовное сообщество, как одну важную часть большой перспективы превращения Короля Аршака II Великую Армению в могущественное и независимое королевство с центральной властью. Раскрывается опыт решения проблем, с которыми в качестве примера для программы сталкивается народ посредством сформированных религиозных сообществ внутри Римской империи, религии и закона Ветхого Завета, и пути его применения в Великой Армении. Показано положительное влияние программы на жизнь армянского народа, а также её значение для деятельности Саака Партева и Месропа Маштоца. В ней представлены проявления взаимоотношений между духовной и светской властью в христианской Армении до падения царства Аршакуни.

В заключении подведены итоги проведенной работы и изложены основные выводы исследования.

The Relationship between Spiritual and Secular Authorities in the Kingdom of Greater Armenia (B.C. IV-V A.D.)

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of

“History of Armenia” 07.00.01

The defense of the dissertation will be held on July 24, 2020, at 14⁰⁰ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave. 24/4).

SUMMARY

The dissertation is dedicated to the study of the relationship between the spiritual and secular authorities in Greater Armenia with its multi-layered nature, to the emergence, development and general picture of the given problem. Based on the analysis of the factual material of different scientific branches, a complete, systematic study of the problem is carried out. The world (Old-Eastern, Hellenistic and early Christian) developments of that period and the peculiarities of their influence on the Armenian reality are taken into account.

The dissertation consists of an introduction, four chapters, conclusions and a list of sources and used literature.

The introduction substantiates the topicality of the topic, the scientific novelty of the study and its practical significance. The purpose and objectives of the research, the chronological framework, the methodology used, the source basis and the level of research are mentioned.

In Chapter one, The Relationship between Spiritual and Secular authorities in pre-Artashesian Armenia, the elements of historical reality on the issue we are interested in are extracted from the ancient Armenian traditions, and the picture of mentioned interrelationships is presented. The relationship of spiritual and secular authorities in the development of Armenian state in the III-II centuries B.C. This relationship is presented during the first Urartian kings and its development and change for its upcoming representatives and royal dynasty. A certain connection is depicted between the proto-indio-european (Dyeyus pater) and the royal elite God Khaldi, as well as the king's special role in religious life. Reference is made to the three sub-periods of the Yervandian era, and special attention is paid to the third one. The influence of the Kingdom of Van and the Achaemenid Empire, and the spiritual, cultural, ideological, economic, military, political and legal factors influencing these relations are emphasized.

In Chapter two, The Relationship between Spiritual and Secular Authorities in Greater Armenia in the II-I centuries B.C., the given relations in the Greek environment and the peculiarities of the Hellenistic order formed as a result of their synthesis with the Eastern customs are presented. The reasons, nature and significance of the formation of the cult of the royal ancestors and the living ruler are studied. In the light of the Hellenistic influence, this issue is studied in the Kingdom of Greater Armenia in the II-I centuries B.C. The nature of these relations differs from the patterns of the general historical gradual development of relations. Efforts of dispensation of royal authority in the spirit of a given time, beginning with the enthronement of Artashes A, and consequences in the above mentioned relations are studied. The deification of the living king becomes the culmination of that process. Its significance from the point of view of state ideology and its role depending on the level of its political and military power is presented.

In Chapter three, The Relationship between Spiritual and Secular Authorities in Greater Armenia in the I-III centuries, the developments in the post-Artashesian period, the aspiration of the Roman Empire and the relations between the spiritual and secular authorities during the reign

of the new dynasty Arshakuni are presented. The reestablishment of the Vahuni priestly family in their position and its reasons are studied. The powers of the priests, the areas of their involvement, and the role and responsibilities of the Armenian king in the religious field are being discussed. The religious policy to be run during the reign of the Sasanians in Greater Armenia is also studied. The general picture of the rituals, ideology and worldview of the Armenian pagan society of the period is being restored to some extent. The extreme tension in the relations between the royal government and the clergy during the last phase of their tenure is presented.

In Chapter four, The Relations between Spiritual and Secular Authorities in 301-428, some regularities of the historical development of the mentioned relationship are introduced through the Old Testament model. The existing conceptual approaches in the New Testament, which should have brought the proclamation of Christianity as the state religion in Armenia, are discussed. The political reasons behind the proclamation of Christianity as a state religion in Greater Armenia and the introduction of the new religion into the state system are analysed. The most important steps towards the rooting of Christianity are being examined. Nerses A's plan to turn the people of Greater Armenia into a large, united spiritual community is considered as an important part of the great prospect of making King Arshak II of Greater Armenia a powerful and independent kingdom with central power. The experience of solving the problems faced by the people through the religions of the Roman Empire and the way of its application in Greater Armenia through the law of the Old Testament Law and religion within the Roman Empire is revealed. The positive impact of the program on the life of the Armenian people, as well as its significance for the activities of Sahak Partev and Mesrop Mashtots is shown. It presents the manifestations of the relations between the spiritual and secular authorities in Christian Armenia before the fall of the Arshakunyats kingdom.

In the conclusion, the results of the implemented work are summarized and the main deductions of the study have been stated.

A handwritten signature in black ink, appearing to be a stylized name or set of initials, located in the bottom right corner of the page.